ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«20» սեպտեմբերի 2018 թվականի № 115-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը և «Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերության 2018 թվականի հուլիսի 04-ի թիվ 12 դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերությանը տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերության ՀՀ Սյունիքի մարզի Բարձրադիրի ոսկու հանքավայրի շահագործման համար, 2016 թվականի հունիսի 15-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/542 թույլտվությունը, թիվ Լ-542 լեռնահատկացման ակտը և լուծել 15.06.2016 թ.-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման Պ-542 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ